

ՇԱՐԷԹԱՐԻՐԻ ԳԻՆԸ:

Տարեկան գինն է 5 ևսորի (փոստի ծախսով): Օտարաբաղաբար բաժանորդները պիտի գիտեն այս հասցեն. *В. Туганов. В. Редюкин Архангельск Гостомы „Медведь“*.
Փոփոխում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (Արծրուշու տան) և պ. Եսաուրեանցի խանութում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՆԻՈՒԹԻՒՆ.

Մասնաւոր յայտարարութիւն տալ տուող պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ տպուան չայերէն, ռուսերէն, վրացերէն, քրեանիարէն, գերմաներէն և քուրդերէն:

ՄԵՆԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԷԹԱՐԻՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մանուկներն:—Մեր ստորին կարգի ուսումնարանները: Ներքին տեսութիւնը: Ընտրութեան ձևը: Գերմանական լեզու: Նամակ ջրիւնուալից: Նամակ խմբագրին: Նամակ Բագուից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Մանուկ փոխադրանք և յետադէմ շարժումը: Նամակ Մեկտրիսից: Նամակ Վիեննայից:—Խառն լուրեր: Առևտրական: Յայտարարութիւններ:—Բանասիրական:

ՆՈՒՆԻՑԱՐԻՆ

«Մշակ» լրագրի խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներին, որքայն 1873 թուի տարեկան վճարը դեռ ևս հաստատած չեն, բարեհաճութեամբ արքայադատի և չուստ հասցնել խմբագրութեանը: «Մշակ» տարեկան վճարը:

ՄԵՐ ՍՏՈՐԻՆ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Հատ անգամ մենք գտնադատում ենք հայերի վրա, թէ նրանք ուսումնարանների համար այնքան չեն դժուար, որքան օրինակի վերջինների ջրեղութեան համար: Իրանց եկեղեցիների գործերը նորոգելու և վարդապետ համար հաղարկելու են մնում, իսկ գուցէ նոյն եկեղեցու գաւթում դնում ուսումնարանը ողորմելի դրութեան մէջ և մնում:

Իսկ այնու ամենայն, համեմատելով ուրիշ արեւելեան ազգերի հետ, հայերը դարձեալ ավելի շատ հակում ունեն գէղի ուսումնարանները: Արտիկ և լինելն զետեղած հայերը, ավելի տեղ կը տեսնէր, որ կայ մի տիրացու, կամ քահանայ որ 8 թէ 10 երեխայ է սովորեցնում, իսկ շատ տեղ կը պատահէր փոքրիկ կանոնադրութեան ուսումնարանները թէ աղջկանց և թէ տղանց համար: Մեծ մասամբ այդ ուսումնարանները անձնագործութիւն են պահանջում, այնպէս որ հազիւ չէ պատահում որ բոլորովին յետ ընկած մի տեղում մի որ և է երկուստեք նուիրում է իրան դաստիարակութեան կամ ասանց ուսման:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութեան հարկաւորութիւնը:

Մինչև ատոմսները դարձ քննարկ և ներկայ դարձ սկիզբը հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութիւնը սահմանափակվում էր խիստ նեղ շրջանով և համարվում էր բացառութիւն: Նա ծառայում էր միայն աստուածաշունչը բացատրելու համար, աստուածաբանական խնդիրները մեկ-

*) Նիշեալ դասագրքերը հայոց լեզուի և գրականութեան մասին կարգացել է 11 յոնվարի ներկայ ամի, համալսարանի հայկական բաժնի անդամներ, պարոն Է. Դիւրիշեան, Յրանտիկան Երեմի հայագետը, թէև նա յայտնում է մի քանի պատմական սխալ կարծիքներ, այսու ամենայն հարկաւոր ենք համարում ծանոթացնել մեր ընթերցողին այդ յօդուածի հետ, որով յայտնվում է մի եւրոպացի գիտնականի հայեացքը մեր լեզուի, գրականութեան և նոյն ուսումնասիրելու հարկաւորութեան մասին:

Ման. Խմբ.

կամ բաւականութեամբ ամենաշինքն ուսմանով...

Եւր. տեսակ ուսումնարանները որքայն քաղաքացիական և կաթոլիկական հայերի մէջ ոչինչ հաստատ ազդեցութիւն չէ կանուտ չունեն, այլ պահպանում են հայ-հասարակութեան նուիրատուութիւններով: Եւր. կամաւոր աւեր, բերը պայմանաւորում են երկու բանով:

Մինք որ այս ինչ քաղաքի կամ գիւղի հայ-հասարակութիւնը տայիս է կամաւոր միջոցներ այն պատճառով որ գիտէ թէ ուսումնարանը կը հիմնվի իր սկզբում և իր հսկողութեան տակ կը գտնվի, իսկ ինչ նրան առէին շարունակեցէ ձեւ կամաւոր նուիրակը, բայց փոխանակ ձեւ գիւղի կամ քաղաքի մէջ իրաւունք ունենալ ուսումնարան բանալու, ու գործեցէ ձեւ փոքրը Տրապիզոնի մէջ հիմնվող հայոց ակադեմիային, հազիւ թէ կը գտնվէր մի եկեղեցի կամ մէկ համայնք, որ համաձայնվէր զրկել իր մօտ ուսումնարան ունենալուց այն յոյսով, թէ Տրապիզոնի մէջ ակադեմիա պիտի հիմնվի:

Ուսմանը և շատ անգամ աստուտութեան երկրորդ պատճառը այն է, որ հայ-հասարակութիւնը գիտէ թէ հիմնվում իր (հասարակական կամ եկեղեցական) փողով ժողովրդական ուսումնարանը, նրա երեխաները կը սովորեն աղօթել մայրենի լեզուով և կը դուրսնան ուսման սկզբնական աստիճանը նոյնպէս մայրենի լեզուով: Եթէ այդ չը լինէր, երեխաները կամաւոր նուիրակներ կամ կը նուազվէին կամ բոլորովին կը կորչէին:

II

Մենք հարկաւոր համարեցինք մեր ուսումնարանների այդ փոքրիկ պատկերը ներկայացնել, որովհետեւ այս քաղաքի ամենքին հետաքրքրում է այն խնդիրը, թէ շատով կառավարութեան կողմից կը նշանակվին տեսուչներ ստորին կարգի ուսումնարանների վրա, որ դաւանութեանը և պատկանէին նրանք, իւրաքանչիւր դաւանում մի մի տեսուչ:

Եւր. տեսուչների այդ փոքր թիւը ցոյց է տալիս, որ նրանք նշանակվում են ոչ թէ սանկալաբական, այլ կառավարական նպատակով:

Նուր համար, լատինական միսիոնարաց զինաբանութեան համար հերձուածողները — հայերի դէմ, նորանց դէպի կաթոլիկութիւն դարձնելու նպատակաւ: Միայն վերջին ժամանակում հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութիւնը անցաւ հոգեւոր շրջանից դէպի աշխարհականը: Հայոց գրականութեան յիշատակարանները խիստ սակաւ, կամ ամենքին յայտնի չէին եւրոպայում:— սակայն ինչ աշխարհ աւելի հարուստ է հնութեան յիշատակարաններով քան թէ Հայաստանը, մի երկիր, որ եղաւ երկրորդ օրօրոցը մարդկութեան, որ եղաւ պատերազմի դաշտ, որ զարնուեցան միմեանց հետ արեւելքի և արեւմուտքի մեծամեծ ազգերը, Ասորիք և Պարսիկները, Աղէքսանդր մեծի զօրքերը և Դարեհը, Սելեւկացոց հպատակ Յոյները, կայսրութեան ժամանակուայ Հռոմայեցիք և Պարթևները, — մի երկիր, որ կրեց Արաբացոց, Թուրքերի, Մանգոլների արշաւանքները, և բազմիցս անգամ ներկուեցաւ արիւնով և աւերակ դարձաւ: Մի քանի տարի առաջ մինչև անգամ չէին նշմարում, թէ որպիսի օգտաւէտ տեղեկութիւններ հայոց լեզուի և գրականութիւնը պարունակում էին իւրեանց մէջ պատմութեան, աշխարհագրութեան և համեմատական փիլիսոփայութեան

Եւրոպ. դաւանում մի ժողովրդական տեսուչ է կարող ոչ հաւեւել ուսման, ոչ մանկավարժական ուղղութիւն տալ ուսումնարաններին: Նորա ազգեցութիւնը կարող է միայն կառավարական լինել՝ պահանջել որ ուսումնարանը հաստատ ներթափան ազդեցութիւն ունենայ, կամ որ ուսուցիչը ունենայ ուսուցչութիւն վարելու համար դիպում, ունենայ ուսուցչութեան համար օրինական իրաւունք: Իսկ այս տեսակ կանոնները գնելով կարելի է կարծել որ ուսումնարանների թիւը կը նուազվի ուրովհետեւ մի կողմից հասարակութեան նուիրատուութիւնները կամաւոր են և չունեն, իսկ միւս կողմից ուսուցչութեան դիպում ունեցողը անձնագործութիւն չի անի գնալ մի գիւղում նստել, չունեն ուսմանով կամ առանց վարձատրութեան ուսուցչութիւն վարելու համար:

Մեր ժողովրդական ուսումնարանների միակ արժանաւորութիւնը իսկ նորանուստ է պարունակում, որ նրանք ավելի հիմնված են մի կողմից ներթափան զոհաբերութեան, իսկ միւս կողմից բարոյական անձնագործութեան վրա: Իսկ կանոնաւոր, օրինական, կառավարական զոյութիւնը այն հիմնարկութեան որ կայանում է բարեխարութեան, զոհաբերութեան և անձնագործութեան սկզբի վրա, այն հետեւանք կունենայ, որ եթէ այն հիմնարկութիւնների թիւը կը նուազվի, յոյս ունենք, որ մնացածները կը բարեկարգվին:

Մանուսկր որ ուրիշ գաղանիք չունեն մեր սկզբնական ուսումնարանները, եթէ ոչ այն որ յատուկ է բոլոր հայ-հասարակութեան և խոր կերպով արժանապատիւ է նրա մէջ, անձնական գրոշմած է իւրաքանչիւր հայի սրտում՝ իր զուսկանքին մայրենի լեզուով կրօնը սովորեցնել, մայրենի լեզուով նրանց սկզբնական ուսում տալ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

Ընթերցողին յիշելով «Մշակի» անցեալ համարի Ներքին տեսութեան

մասին, և որպիսի հարուստ հունքը խոստանում էր նոյն ուսումնասիրութիւնը փիլիսոփայութեան, իրաւաբանական արեւմտի, բժշկութեան, հին աշխարհի կրօնի պատմութեան և քրիստոնէական եկեղեցու ուսման համար: Եւ այդպէս, իրաւաբանական արեւմտը ունի իւր ներկայացուցիչը Միխիթար Գօրի օրէնագրութիւնը, գրված տասերկու երրորդ դարում, որը պարունակում է իւր մէջ յօդուածներ ամենաին հռոմէական իրաւաբանութեան, որ մնում էին մինչև Թէոֆիլ օրէնագրութիւնը:—Նա ունի իւր մէջ և շատ նուիրական անհատական և քաղաքական իրաւունքների թժուկական արեւմտը ունի հայոց գրականութեան մէջ որպէս ներկայացուցիչ Միխիթար Հերացուն, որոյ աշխատութիւնն է «Նետազոտութիւն ջերմախոնքերի և տասնվեցերորդ դարում» Ամերգովաթիւն, որ յօրինեց «բժշկական բաւարան»: Առաջին յիշատակարանները հայոց գրականութեան, որ հասել են մեզ, չեն անցնում մեր թուականի չորրորդ դարից: Նոյն ցոյց են տալիս նորան այն աստիճան կատարելագործութեան մէջ, որը ենթադրում է նորա մշակութիւնը շատ երկար ժամանակների ընթացքում: որովհետեւ գրականութեան պիլիսոփայ սրնթաց զարգացումը կը հակա-

մէջ տպված առևտրական բանկի ժողովի մասին յօդուածը, մեր պարտաւորութիւն ենք համարում մի երկու խօսք ասել առհասարակ ընտրութեան ձևի մասին:

Ամենայն տեղ ընդունված է հետեւեալ ձևը՝ մի պաշտօնի համար ժողովի անդամները առաջարկում են իրանց կանգիդատներին բերանացի կամ թղթերով: Այդ կանգիդատներից կազմվում է մի ցուցակ: Գուցակում եղածից իւրաքանչիւրը, որ չէ հրաժարվել, քուէարկութեան տակ է ընկնում, այնպէս որ նա եթէ թղթերով ստացաւ 21 ձայն, քուէարկութեամբ կարող է պակաս ստանալ, քան թէ ուրիշը, որ թղթերով ստացաւ օրինակի համար 10 ձայն: Ահա ինչպէս թղթի վրա առաջարկվում է գրել միայն մէկի անունը, բայց ես այդ պաշտօնի համար ունեմ արժանաւոր երեք անձինք: Եւ գրում եմ մէկին, իսկ միւս երկուսին առաջարկում եմ գրել իմ ծանօթներին, որք եթէ աւելի արժանաւոր կանգիդատ չունեն, ընդունում են իմ առաջարկածին: Քուէարկութեան ժամանակ ես այդ երեքից ամեն մէկին ընտրողական, սպիտակ քուէ եմ տալիս:

Կարող է պատահել այնպէս, որ իմ գրած անունը ծանօթներիս աչքում անարժան երեւում: Ուրեմն նրանք իրանց գրած անուններին տալիս են ընտրողական քուէ իսկ իմ գրածին ոչ: Դուրս եկաւ, որ իմ գրածը ստացաւ մի ձայն, իսկ իմ ծանօթների գրած անունները ստացան երկու երկու: Կարող է և այնպէս պատահել, ինչպէս եղաւ Առևտրական բանկի ընդհանուր ժողովում, որ մի քանի բաժանորդները ունեն 3 կամ 4 ձայն: *) Սոցանից իւրաքանչիւրը գրում է թղթի վրա մէկ անուն այնպէս որ եթէ 4 ձայն ունեցող 10 անձն գրեն մի և նոյն անունը, կը յայտնվի որ այդ անունը ստացաւ

*) Բաժանորդական բանկում ով որ աւելի ակցիաներ ունի, աւելի էլ ձայն ունի: Փոխադարձ կրօնի բանկում բոլոր անդամները հաւասար ձայն են վայելում:

աւելի այն օրէնքներին, որոնք կառավարվում են մարդկային հոգեւոր հանգրգիւն և ազատ ընթացքով, եթէ այդ անցքը չունենալ իւր պատճառները և իւր յաջողաբար նախապատրաստութիւնը անցնալի մէջ: Մեր ունեմ գրական փաստոր հայոց նախկին գրականութեան զոյութեան մասին այն դարերում, որոնք շատ հին են նորա յայտնութիւնից, աւելի ճիշտ ասած, նորա վերածննդութիւնից չորրորդ դարում: Մովսէս Խորենացին, որ ապրում էր հինգերորդ դարում, մի գրող, որ խորին գիտութիւն ունէր իւր հայրենիքի հնութեան մէջ, միւսում է Մթերին և Եղեւսի մեհնարական գրքերի մասին: Նա խօսում է պատմական երգերի ժողովածուների համար, որոնք պահվում էին թագաւորների և իշխանական ընտանիքների թանգարաններում, այդ երգերը մինչև նորա ժամանակը երգում էին Գողթան ասուած ժողովրդական երաժիշտները, ամենով քնարի նըման մի նուագարանի վերա, որ կոչվում էր «բամբուլ» — Երգերը բաժանվում էին երեք շրջան՝ աւսորական, մեղա-պարսկական և հայկական: Մի քանի կտոր այդ երգերից, որոնք հասցրեց մեզ Մովսէս Խորենացին, իւր «Հայոց պատմութեան» մէջ, ներշնչւած են վիպասանական հոգով, նոյն

ու թէ 10 ձայն, այլ 10 անգամ 4 ձայն, ուրիշ 40 ձայն Իսկ միւս անունը, որին գրել են մի ձայնի իրաւունք ունեցող 21 մարդ, ստանում է 21 ձայն:

Արջայէս ընտրողութեան ժամանակ եւ կարող եմ շատ արժանաւոր անունները մոռանալ, բայց այդ անունները կարող են առաջարկել միւս անձինք և երբ նոքա նշանակված կը լինեն քուէարկական տուփերի վրա, գուցէ ես իմ գրած անունին սե քուէ տամ, իսկ ուրիշի գրածին սպիտակ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՁՈՒ

Հատերին յայտնի կը լինի այն իրողութիւնը, որ վերջին ժամանակներս նկատուում է մեծ ձգտում թէ սամկարնակ և թէ մանուշակ մեր կողմատեան հայ-երկրաստորները կողմից դէպ ի Գերմանիոյ համալսարանները: Եւ այն իսկ Կերպասան ուսումնարանի հոգաբարձութիւնը, որին յանձնուեցաւ հանգուցեալ Էջմիածնացի կուսակաճ գումարը, ուղարկել է և ուղարկելու է միշտ որչափ թուով աշակերտներ դէպի Օւնիցերիոյ կամ Գերմանիոյ համալսարանները: Եւս իրողութիւնը, կամ լաւ ևս ասել զհոգաբարձութիւնը հայ-ծրնոյնի կամ երկաստորները կողմից, որոնք շատ գէշբոլմ գոհում են իւրեանց նկատման տալիս թիւեր ճշմարիտ կրթութեանը անտարակոյս պիտի ուրախակի երեւոյթ հասարակ մեջ համար և ստիպել մեզ որքան կարելի է հարթել նորա ճանապարհը, որ շատ կրկնուին այդպիսի երջանակի բացառութիւնները:

Վստում որ անյարմարութիւններից մինը, որ կարող է պատահել այդ դէպքում, անխտան լինելու է և այն, որ երկաստորները շատ անգամ գնում են այնտեղ բարբոթին անձանկով լինելով լեզուին, որ յայտնի բան է մեծ արգիւշ կարող է լինել նոցա համար:

Այսին առաջ ունենալով այս հանգամանքը, համարձակուիմ ենք այսպիսի միտք առաջարկել՝ օգտակար չէր լինի արդեօք և Կերպասան քաղաքի պրոպագանդայի մէջ մտցնել և այդ լեզուի դաստիարակութիւնը:

Միւս կողմից պէտք է աչքի տեսնել ունենալ և այն հանգամանքը, որ եթէ մեր լեզուն երբեք ինչ պէտքէ դատնայ կատարելով անօթ լուծում որոշութեան, եթէ երբ և ինչ պէտք է յայտնուին նորմալ գրուած դասագրքեր և այլ թարգմանութիւններ, ամենից յարկաւ միջնորդը անտարակոյս գերմանական լեզուն կարող է լինել: Վստում թեան գոտացում ծիւղիւրը այդին շատ դարձ է, որ յատաճ են գնացել այն մասին ազգերի մէջ, յայտնուել են տրեւէ հարկաւ բաւար առարկաների ու երկրորդներին անուններ, որոնցից զմեզ է մեր լեզուն: Աստուգ և Քրիստոսական լեզուները ունեն ընդունակութիւն ամբողջապէս ընդունելու դիւնոսկան տեղանքները Իսկ հայոց լեզուն որ

չունի այդ ընդունակութիւնը, ստիպուած է նոր առարկաների կամ երկայնների համար նոր անուններ ստեղծել բայց այդ անունները, նախկինը է պատրաստ գտնել գերմանական գրականութեան մէջ, որ նոյնպէս սիրում է նորմալ առարկաներին նոցա յատկութիւնից առնուած բայց իւր մարմնի բառերով արտայայտած անուններ սալ, օգտու քաղելով իւր բարդ բառեր կազմելու յարմարութիւնը, որ յատկանիշ է և մեր լեզու: Այդ արգակցութիւնը երկու լեզուների կապակցութեան մէջ շատ օգտակար կարող էր լինել սպազայ թարգմանութիւնների համար, որոնք մեծ մասը անտարակոյս Կերպասան քաղաքի աշակերտների ձեռքով պիտի լինի:

Չը մոռանանք նոյնպէս և այն հանգամանքը, որ մենք յիշել ենք արդէն մի անգամ «Մշակի» անցեալ տարուայ համարներում, որ գերմանական լեզուն Քրիստոսական հետ միասին, կարող է ծանապարհ բանալ զպրոցի ուսումնարանների համար դէպի այն փորձարկելու արդարական արհեստները, որոնք կան մեր երկրում:

Ն. Լ.

ՆԱՄԱԿ ՑՈՒՆՈՒԱԼԻՑ

Հարգելի լրագրի 39-երորդ համարում 1873 թ. ապրիլ 1-ին կարդացի պարոն Փ. Նատիկի յօդուածը, որ խօսում է Յիսիւնալու ուսումնարանի մասին:

Պարոնը ասում է թէ «6 տարի առաջ ժողով կազմուեցաւ Հայոց մէջ, որ ուսումնարան բանաւ, և իւրաքանչիւր մարդը ժողով կազմողներից ընծայեց երեսուն ռուբլի և այդ գումարը հասարակ 2 հազար ռուբլի, որի շահը ծառայում է ուսումնարանին. 240 ա. Հայոց և Ռուսաց լեզուի ուսուցչին, 120 ա. վրացաց լեզուի ուսուցչին, դաստան վարձը 20 ռուբլի մի տարի, պիտոյքների համար 20 ա. բոլորը 400 ա. փ. Նատիկը ամբողջապէս 400 ա. համարում է Յիսիւնալ Հայ ժողովրդից ընծայած փողի շահը: Յայց եւս հասնում է 130 ա. 400 ռուբլից տալիս է եկեղեցին տարեկան ծախսուած մոմերի օգուտից չըքաւոր Հայ աշակերտաց համար:

Պարոն Նատիկը գրում է թէ ուղարկուեցաւ յայտնի է որ Յիսիւնալի ուսումնարանից դուրս եկած աշակերտները, որ անցուցել է 5—6 տարի այնտեղ ոչ Ռուսերէն և ոչ Հայերէն մի հաստուած չեն կարողանում հասկանալ և պատմել:

Արդեօք մի անձն, որ մի լեզուի վրա ոչ մի տեղեկութիւն չունի, կարող է դատել այն լեզուն: Այնպէս փ. Նատիկը գրում է Հայոց լեզուի վրա թէ «Յիսիւնալում չկայ այնպիսի աշակերտ, որ կարողանար մեկ հաստուած ուղիղ ասել Հայոց լեզուից» բայց եւս մօտ քսան աշակերտ դուրս կը բերեմ որ կարողայ Հայերէն աշխարհաբար գիրք և պատմէ կարդացածը իւր բարբոթով: Պարոն Նատիկը գրում է թէ երեք լեզու են սովորացնում Ռուսերէն Հայերէն, և վրացերէն ու խորհուրդ է տալիս Յիսիւնալեցոց թէ աւելի լաւ կլի 3 լեզուի տեղ սովորացնել մի լեզու: Կարծեալ խորհուրդ է տալիս, որ Յիսիւնալեցիք լաւ կանեն, որ բռնեն այնպէս վարժապետ որ աւարտած լինի Ազգ.:

Թեամբ արիականներ, և բացի սորանից հայերը այնքան յայտնի կերպով իւրեանց բարբառով տարբերում էին քարոզիչների լեզուից, որը կամենում էին նորանց բերել դէպի քրիստոնէութիւն: Միայն փոքր ինչ յետոյ, Տրդատ երկրորդի (?) թագաւորութեան ժամանակ, և Դիօկլետիանոսի թագաւորութեան վերջերում, քրիստոնէական կրօնը տարածուեցաւ բոլոր Հայաստանում, մտաւ ամբողջ մէջ և կանգնեցաւ ազգային եկեղեցի: Քրիստոնէութիւնը բարոյապէս նորոգելով նորանց, փոխեց նոցա քաղաքական և սոցիալական կեանքը, մտցնելով նոցա մէջ նոր մտաւորական պիտոյքներ, նորա հետ տուեց նա և զարկ գրականութեանը: Այժմ, քրիստոնէութիւնը ներս տարան Յոյները Հայաստանում կապաւորակայից. նա մուտք գործեց մի դրացի երկրից, դէպի որը դրաւ Հայերին բնական համազգացութիւնը: Հայերի և Յոյների մէջ որպէս ազգեր, որ պատմութեան էին արիացիների, կամ հնդկա-երօպացիների մի և նոյն տոհմին, կար բնածին համամտութիւն: Բացի դրանից, նոցա մէջ կար այն յայտնի միութիւնը, որով քաղաքական է հայոց գրաւումը դէպի հելլենացոց քրիստոնէութիւնը և վերջինների խորին ազդեցութիւնը նոցա վերաւ: Հայերը, եռանդուն կերպով հրապուրուելով իւրեանց

սանգրեան վարժապետական ուսումնարանում вь Александровскомъ Учительскомъ Институтѣ և նորան տան 550 *) մանկից ոչ պակաս, սենեակը և տաքացնելու փայտ կամ թէ չէ Յիսիւնալեցիք պահեն մեկ ստիպանդիստ վերոյիշեալ ուսումնարանում, և դաս տան Յիսիւնալի ուսումնարանում Ռուսաց լեզուի, իսկ կրօնը տեղական Հայ քահանայն:

Ես խորհուրդ կտայի Յիսիւնալեցոց, որ սովորացնէին մայրենի լեզու կամ տեղական, որ աւելի հասկանալի է մանուկներին, որ նրանք զարգանային այդ երկու լեզուների մէջ, որ ինչ է զարգանալով ապագայում օգուտ քաղէին տրանից, և յետոյ առաւել հնչող կլինէր սովորեցնել տեղութիւնական լեզուն: Եւ ոչ թէ այնպէս ինչպէս նոր մանկավարժը ասում է:

Բարեկ Տէր Արքանաւանց

Պարոն Խաղաղի

«Կովկաս» լրագրի մէջ եւ կարդացի փ. Բազալովի յօդուածը, որի մէջ նա հերքում է այն լուրը, իբրեւ թէ արուեստագործական ուսումնարանում չէր լինելու ալաղաւան կրօնի դաստիարակութիւնը իսկ տեղական լեզուների արտաբանական վերաբերութեամբ ասում է որ բոլոր հայ-մանուկները չեն խօսում ալաղաւան, եթէ ոչ վրացերէն լեզուով: Դատողութիւնը էլի առանձնական բան է. նորան կարելի այս կողմն էլ ձգել այն կողմն էլ, բայց եւս զարմանում եմ, թէ ինչպէս կարելի է ալաւաղել ըստ իրողութիւնը, որից հիմնվում է մի կարգ եզրակացութիւնները: Եւս, հարեանցի ծանօթ լինելով այն բանակութիւն, որ եղաւ այդ հարցի առիթով թիֆլիզի գիւղական լրագրութեան մէջ չեմ քննում նորա յօդուածի մանրամասնութիւնները: Որինակի համար եւս չեմ խօսում այն հանգամանքի մասին, թէ էլ ինչ առանձին գումար է պահանջում քաղաքի տեղական լեզուների դաստիարակութեան համար, երբ հիմնուելու ուսումնարանի բոլոր գումարը համարեալ քաղաքին է պատկանում, եւս միայն կամենում եմ յայտնել որ նորա յայտնած իրողութիւնը հայերի մասին սխալ է: Ամբողջ հաւաքարում, որտեղ կենում է մի խեղճ արհեստաւորների մեծ մասը, տիրապետող լեզուն հայերէնն է, կան զարմալ մի քանի ամբողջ թաղեր, ուր համարեալ միմիայն հայերէն են խօսում: Բացի դրանից թիֆլիզում կան շատ օտար մանուկներ, եկած Հայաստանի գիւղերից ու քաղաքներից, ուր վրաց լեզուի հօտն էլ չկա: Իսկ ինչ որ կը վերաբերի ռուսերէն լեզուին, կարող ենք հաւատացնել փ. Բազալովին, որ մեր ստորին դասի մանուկներից հագիլ թէ հարկերից հինգը ծանօթ լինի այդ լեզուն: Ճշմարիտ է, հայ-ընտանիքների մէջ կան այնպիսիք, ուր մանուկները միմիայն վրացերէն կամ ռուսերէն են խօսում, բայց այդ ըստ մեծի մասին բարձր դասումն է, որ կարողութիւն ունի վրացի կամ ռուս զայնակներ պահելու: Իսկ մենք կարծում ենք որ արուեստագործական ուսումնարանը այդ դասի համար չէ հիմնուելու: Ն.

ՆԱՄԱԿ ԲԱՎՈՒՆՑ

1872 թուականի Մշակի 19 №-ում արդէն յայտնի է, որ տեղս կազմուել էր Բարեկգործա-

*) Ինչ որ տալիս են այն էլ հնչուութեամբ չեն կարողանում սալ:

հոգեւոր դաստիարակների (յոյների) գրականութիւնով, մեծ ջանքով սկսան ուսանել նորան և հետեւ նորա օրինակներին, որով նոքա հիացած էին: Հայերը ծանօթացան արհեստի հետ, որը յայտնի չէր արեւմտեան գրողներին, այսինքն աշակերտով միտքը տալ նորան խիստ պատշաճաւոր, ազնիւ եզրեցիկ արտայայտութիւններ: Բացի դրանից նոքա թարգմանեցին այն գրքերը յունական աշխատութիւններից, որոնք ներգաղանկացութիւն ունէին իւրեանց զգացմունքների և պիտոյքների հետ,— և այդպիսեալ ըստանձնեցին նոցա պատմաբանները, հին փիլիսոփայները և եկեղեցւոյ հայրերը: Մեք Հայերին եւք պարտական, որ իւրեանց գրչագրների միջոցով պահպանեցին հնորի շատ աշխատութիւնները, որոնց իսկականները այժմ կորած են: Ոչ սակաւ թանգազին է մեզ համար գտանել այդ շարքարկութիւնները, որը ողջ մնացին ժամանակի կորստէն, կամ աւելի ոչնչացնող ներգործութիւնից մարդկային ձեռքի, հայերէն թարգմանութեանց մէջ, որ իղել են մեծ մասամբ հինգերորդ դարում, որոց գրչագրները պահպանուած են եղել աղաւաղութիւնից, որ արտագրողները խառնում էին նոցա մէջ դարձիւ ընթացքում, Համամատութիւնը այդ թարգմանութեանց իսկականների հետ, որը եղել են նոցա աղբիւր:

կան» անունով ընկերութիւն, որի նպատակն է օժանդակել Բագու գտանվող թէ տեղացի և թէ օտարական աղքատներին: Այդ գործի կառավարութեան համար ընտրուել էին մի տարի ժամանակաւ հինգ հոգաբարձուք—Արթ. Թաղէոս Աւագ-Քահանայն և հետեւեալ պարոնայրը—Գ. Դիւտարեանց որ և զանապետ, Գ. Ալաղեանց, Ա. Մելիքեանց և Բ. Սարգսեանց:

Ընկերութեան առաջին տարվայ շրջանը լրացած լինելով ապրիլի 1-ին Հոգաբարձութիւնը հրաւիրական թղթով հրաւիրում է Բագու գտնուած բոլոր թէ մշտապէս և թէ ժամանակ նուիրատու անձանց ի հաշուատեսութիւն: Նոյն օրը եկեղեցւոյ մէջ յիշեալ աւագ քահանայն, որ և հոգաբարձութեան նախագահ է, յայտնեց Հայ հասարակութեան իւր և հոգաբարձուների կողմից չորհակալութիւն, որ չեն խնայել իրանց կամաւոր նուերը աղքատների օգտի համար: Ի վերջոյ ևս յայտնեց, որ ինչպէս յայտնուած էր Հոգաբարձութեանց, երեկոյեան 6 ժամին ժողով լինի յիշեալ ընկերութեան զանապետ փ. Գ. Դիւտարեանցի առեւ, ուր տարեկան ընդհանուր հաշիւ տեսնուելու: Բաւական և երեկոյ անձինք հաւաքուեցան յիշեալ տեղում, կարդացվեցան ընդհանուր հաշիւները, և բաժանվեցան իւրաքանչիւրին առանձին թերթերի վերա տպագրուած: Մի տարվայ ընթացքում Հոգաբարձուք գտել էին թէ մշտապէս և թէ միանուագ 102 նուիրատու անձինք, որոնցից ընծայարեքութիւն եղած է. . . . 941 ա. 50 փ.

Առանձին արդիւնաբերութիւն Հոգաբարձուաց

Խնդրանք Հոգաբարձուաց գիմնադիւսի Հայ ուսանողները փ. Ամիրաղբանցի առաջնորդութեամբ թատրոն ներկայացրին 72 թ. յուն. 19-ին, ծախսեց միջից հանելով զուտ օգուտ մնաց 104 ա. 28 փ.

Թատրոնի ծախսի մէջ հաշուած էր 10 ա. — բայց նորա անդամները ընծայեցին յօդուած աղքատաց այդ դրամը . . . 10 ա. —

Մի տարվայ ընթացքում պատրաստ գումարի տոկոս ստանձված է զանազան ժամանակում. 57 ա. 25 փ.

Դուսարն է 1113 ա. 3 փ.

Զիշեալ գումարից բաժանուած է մի տարվայ ընթացքում

1. Պարսկաստանից սովի պատճառաւ Բագու պատահած աղքատներին հացի և ճանապարհա ծախսի համար. 132 ա. 44 փ.
2. Բագուաբնակ աղքատաց ախիւր և փող. 132 ա. 90 փ.
3. Դամասկոցի գետնաշարժի պատճառաւ Բագու փոխադրուած աղքատաց ախիւր և փող 177 ա. 47 փ.
4. Ղարաբաղցի Բագու բնակվող կամ անցաւոր աղքատաց. . . 85 ա. 28 փ.
5. Ղարաբաղի Յովսէփ Սանասարեանցին ճանապարհածախս. . . . 15 ա. .
6. Սպահանցի Աղախան Կիրակոսեանին Արքունի հիւանդանոցում 41 օրվա համար բժշկելու վարձ 16 ա. 40 փ.
7. Երևանցի, Նախիջևանցի, Նուխեցի, Կերեւանցի և Ղազարիցի Բագու պատահած անցաւոր աղքատաց 48 ա. 15 փ.

կարող է տալ կրկնակային կատարեալ զօրութիւն վերականգնել բնագրի ճշմարտութիւնը և ուղղել նորան ժամանակով եղած վրիպակներից: Օրինակի համար, եթէ համեմատեմք երկու կամ երեք օրինակ տպագրուած գիրքը մի և նոյն յոյն հեղինակի, անտարազայն այն հրատարակութիւնը կարող է ունենալ գերազանցութիւն, որը մօտաւորապէս համապատասխանում է հայերէն թարգմանութեանը:—Եւ այդպէս, մեք տեսնեմք, որ հայոց գրականութեան յիշատակարանները յայտնվում են տասնութինգերորդ դարում, այսինքն, գոնեա հինգ դար առաջ, քան մուսուլմանների գրականութեան զարգանալը: Նոքա շարունակվում են միջին դարերի բոլոր ընթացքում և համարեա հասնում են մինչև մեր ժամանակը, ձեակերպելով մի ոսկի շղթայ, որ միաւորում է հին արեւելեան աշխարհը նորի հետ: Վերին Ասիայի պատմութեան համար, ամբողջ ութը դարերի ընթացքում զինի Քրիստոսի ծննդեան, հայոց գրականութեան յիշատակարանները են միակ առաջնորդներ, որոնց մեք ունեւք որպէս այն ժամանակի եղական վրայականներ, ուր կարելի է տեղեկութիւն գտանել: Հայոց մատենագրները, ծնուելով քրիստոնէական հասարակութեան մէջ, յրգապատուած լինելով աղբիւրից, որը անձնատուր էին կուսապաշտութեան